



ՍՈՒՐԲ ՉԱԿՈԲ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՑԻ

Արտաքսան Կրթակի

18 ՓԵՏՐՈՒԱՐ 2018

Կիրակօրեայ Ընթերցումներ
Ծանուցում

Էջ 1
Էջ 4

ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵՒ ԳԻՐՔԵՆ (33:2-22)

Ողորմէ մեզի, Տէր, որովհետեւ քեզի՝ յուսացինք. անհաւատներուսերունդը կորուստի պիտի մատնուի, բայց գուն պիտի փրկեսմեզ նեղութեան ժամանակ: Ժողովուրդները քու ահեղ ձայնէդ շշմեցան, հեթանոսները փախան քու վախէդ: Ինչպէս խառնիճն ու մարախը կանաչութիւնը կ'ոչնչացնեն, այնպէս յափշտակիչները պիտի թափին անոնց աւարին վրայ, եւ անոնք ծաղը ու ծանակ պիտի ըլլան:

Սուրբ է մեր Տէր ... իմաստութիւնը, Աստուածը որ բարգիտութիւնը եւ աստուածապաշտութիւնը պիտի բլլան այն գանձերը, որոնցմով պիտի արդարանանք: Այն ատեն ձեր կրած երկիւղները իրենք պիտի կրեն. անոնք՝ որոնցմէ գուք կը վախնայիք, իրենք պիտի վախնան ձեզմէ. պատգամաւորներ պիտի դրկեն ձեզի՝ խաղաղութիւն ուղելով, դառնապէս պիտի լան: Սուրբ է մեր Տէր բնակի. իրաւունքով եւ արդարութեամբ պիտի լեցնէ Սիոնը: Այն ատեն հեթանոսները Օրէնքին ձեռքը պիտի մատնուին, իսկ մենք մեր գանձերով պիտի

փրկուինք. իմաստութիւնը, գիտութիւնը եւ աստուածապաշտութիւնը պիտի ըլլան այն գանձերը, որոնցմով պիտի արդարանանք: Այն ատեն ձեր կրած երկիւղները իրենք պիտի կրեն. անոնք՝ որոնցմէ գուք կը վախնայիք, իրենք պիտի վախնան ձեզմէ. պատգամաւորներ պիտի դրկեն ձեզի՝ խաղաղութիւն ուղելով, դառնապէս պիտի լան եւ խաղաղութիւն խնդրեն, որովհետեւ անոնց ճամբանները իրենց աւարտին հասան: Ալ պիտի չվախնաք հեթանոսներէն. անոնց հետ ձեր դաշինքը վերջ պիտի գանէ եւ ա'լ գանոնք մարդու տեղ պիտի չդնէք: Աշխարհը կը սգայ, որովհետեւ անշքացաւ. Լիբանանը մերկացաւ, Սարոնի դաշտագետինը տօթէն

այրեցաւ, Գալիլիա եւ Կարմեղոս լերկ մնացին: «Հիմա պիտի ելեմ, -կ'ըսէ Տէրը, - եւ պիտի ցոյց տամ իմ փառքս ու զօրութիւնս, եւ գուք պիտի տեսնէք ու հասկնաք թէ զուր էր ձեր չափազանց ինքնավստահութիւնը եւ կրակը պիտի բնաջնջէ ձեզ: Այո, հեթանոսները պիտի այրին այնպէս՝ ինչպէս դաշտին փուշը կը կտրեն ու կրակը կը նետեն: Հեթանոսները պիտի լսեն ինչ որ ըրի, իմ ժողովուրդս պիտի ճանչնայ իմ զօրութիւնս»: Անօրէնները Սիոնէն գուրս գրուեցան եւ արդէն դողը բռներ է ամբարիշտները. իսկ ո՞վ ձեզի պիտի պատմէ յաւիտենական կրակին մասին: Եթէ արդարութեամբ ապրիք եւ ուղիղը խօսիք, անօրէնութիւնն ու անիրաւութիւնը ատէք, ձեր ձեռքերը կաշառքէ հեռու պահէք, ոճրային առաջարկները չլսելու համար ձեր ականջները խցէք եւ անիրաւութիւն չտեսնելու համար ձեր աչքերը փակէք, բարձր եւ հաստատուն ժայռի վրայ շինած կ'ըլլաք ձեր տունը. եւ այն ատեն ո՞չ հացի պակաս պիտի ունենաք եւ ոչ ջուրի. պիտի տեսնէք թագաւորը իր փառքով, ձեր աչքերը պիտի տեսնեն անոր անսահման երկիրը, եւ գուք պիտի խոկաք Տիրոջ երկիւղին մասին: Այն ատեն, ալ ո՞չ մարդահամար կատարողներ պիտի գան, ո՞չ հարկահաւաքներ, եւ ոչ ալ ձեր ամրութիւնները լրտեսողներ: Ա'լ պիտի չլսէք Ասորեստանի անբարտաւան

առաջարկները, ոչ ալ անոր խուժդուժ լեզուն, զոր կարելի չէ հասկնալ: Ահաւասիկ Սիոնը, մեր փրկութեան քաղաքը. ձեր աչքերով տեսնէք երուսաղէմը, ճոխութեան քաղաքը, յաւիտենապէս անշարժ վրանի մը պէս, որուն ո՞չ ցիցերը կը խախտին, ոչ ալ պարանները կը փրթին: Այնտեղ ձեր մէջ ներկայ պիտի ըլլայ Տէրը իր փառքով, եւ երկիրը ձե՛րը պիտի ըլլայ իր լայնահուն

Տէրն է մեր հայրը, Տէրն է մեր դատաւորը, Տէրն է մեր իշխանը, Տէրն է մեր թագաւորը, Տէրն է մեր փրկիչը, ի՞նչն է որ մեզ պիտի փրկէ:

գետերով ու ջրանցքներով. ա'լ օտարութիւն պիտի չերթաք եւ ձեր նաւերը պատերազմի պիտի չելլեն, որովհետեւ մեր մեծ Աստուածը այլեւս պիտի չլքէ մեզ: Տէրն է մեր հայրը, Տէրն է մեր դատաւորը, Տէրն է մեր իշխանը, Տէրն է մեր թագաւորը, Տէրն է մեր փրկիչը, ի՞նքն է որ մեզ պիտի փրկէ:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՀՌՈՄԱՅԵՑԻՆԵՐՈՒԽ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԻՆ (12.1-13.10)

Պւատի, եղբայրնե՛ր, քանի Աստուածայնքան ողորմած եղաւ մեզի հանդէպ, կ'աղաչեմ որ դուք ձեզ Աստուծոյ ընծայէք որպէս կենդանի գոհ մը՝ իրեն վերապահուած, որովհետեւ ատիկա է Աստուծոյ ուղած ճշմարիտ պաշտամունքը: Այս աշխարհի մարդոց վարմունքը մի՛ ընդօրինակէք, այլ նորոգուած միտքերով նոր մարդ եղէք, որպէսզի ձեր փորձառութեամբ ընտրէք լաւը, գիտնալով Աստուծոյ կամքը, այսինքն՝ ինչ որ բարի է, ընդունելի է իրեն եւ կատարեալ:

Ինծի տրուած Աստուծոյ շնորհքով հետեւեալ պատուէրը կու տամ իւրաքանչիւրիդ.՝ մեծամիտ եւ ինքնահաւան մի՛ ըլլաք.

...Քրիստոսի միացած ըլլալով՝ մենք բոլորս մէկ մարմին ենք: Եղէք եւ միայն Աստուծմէ մեզի տրուած հաւատքին չափով գնահատեցէք դուք ձեզ: Ինչպէս մեր մարմինը բազմաթիւ անդամներ ունի, որոնց պաշտօնը նոյնը չէ սակայն, այնպէս ալ Քրիստոսի միացած ըլլալով՝ մենք բոլորս մէկ մարմին ենք: Թէպէտ որպէս անդամներ իւրարու կապուած ենք, բայց Աստուծոյ շնորհքը իւրաքանչիւրիս տարբեր պարզեւ մը տուած է, զոր պէտք է գործածենք: Եթէ պատգամախօսութեան պարզեւ ունինք՝ պէտք է պատգամենք մեր հաւատքին համեմատ: Եթէ ծառայելու շնորհքը տրուած է՝ պէտք է ծառայենք: Եթէ ուսուցանենք: Եթէ յորդորելու կարողութիւնը ունինք՝ պէտք է յորդորենք: Իր ունեցածը ուրիշներուն բաժնողը առատօրէն թող բաշխէ: Վերակացու եղողը եռանդագին թող աշխատի: Ողորմութիւն ընողը խնդութեամբ թող ընէ:

Զեր սէրը թող անկեղծ ըլլայ: Ատեցէք ինչ որ չար է եւ տեւաբար բարիին ձգտեցէք: Եղբօր պէս զիրար սիրեցէք գորովանքով: Յարգելու մէջ

զիրար գերազանցեցէք: Եռանդագին աշխատեցէք առանց ծուլանալու: Ջերմեռանդ հոգիով Տիրոջ ծառայեցէք: Յոյսով ուրախացէք, նեղութեանց մէջ համբերող եղէք, յարատեւ աղօթեցէք: Կարիքի մէջ եղող եղբայրներուն օգնեցէք եւ միշտ հիւրասէր եղէք:

Օրհնեցէք ձեզ հալածողները. մի՛ անիծէք, այլ օրհնեցէք: Ուրախացողներուն հետ ուրախացէք եւ լացողներուն հետ լացէք: Բոլորին հանդէպ նոյն վերաբերումը ունեցէք. մեծամիտ մի՛ ըլլաք, խոնարհ մարդոց ալ ընկերութիւն ընելու զիջեցէք, եւ դուք ձեզ իմաստուն մի՛ համարէք:

**Բոլորին
հանդէպ նոյն
վերաբերումը
ունեցէք.**

Ոեւէ մէկուն չարիքին չարիքով մի՛ հատուցանէք: Զանացէք ընել ա՛յն ինչ որ բոլոր մարդոց աչքին բարի է: Որքան կրնաք՝ ամենուն հետ խաղաղ ապեցէք: Սիրելինե՛ր, երբեք դուք անձամբ վրէժ լուծելու մասին մի՛ մտածէք, այլ ձգեցէք որ Աստուծոյ բարկութիւնը ընէ ատիկա. որովհետեւ Տէրը Սուրբ Գիրքին մէջ կ'ըսէ. «Ի՞մս է դատելու եւ պատմելու իրաւունքը. Ե՛ս պիտի հատուցանեմ», իսկ ուրիշ տեղ մը կ'ըսէ. «Եթէ քշնամիդ քաղցած է, հաց տուր իրեն. Եթէ ծարաւ է, ջուր տուր: Այսպէս վարուելովդ արդէն ամօրը զինի կ'այրէ»: Մի՛ պարտուիր չարէն, այլ բարիով յաղթէ չարին:

Ամէն մարդ պետական իշխանութեանց պէտք է հնագանդի, որովհետեւ առանց Աստուծոյ թոյլտուութեան իշխանութիւն չի կրնար ըլլալ, եւ գոյութիւնունեցողիշխանութիւնները Աստուծմէ կարգուած են: Ուստի, ով որ իշխանութեանց կը հակառակի՝ Աստուծոյ հրամանին է որ կը հակառակի, եւ հակառակողները իրենք զիրենք դատապարտութեան տակ կը դնեն: Իշխողները վախ չեն պատճառեր բարիք գործողներուն, այլ միայն չարագործներուն: Դուն կ'ուզե՞ս իշխանութենէն չվախնալ. բարիք գործէ, եւ անկէ գովասանք կը լսես. որովհետեւ Աստուծոյ պաշտօնեան է անիկա, քու բարիքիդ համար կարգուած: Իսկ եթէ չար գործես՝ վախցիր անկէ, որովհետեւ զուր տեղը չէ որ սուր կը կրէ. որպէս Աստուծոյ պաշտօնեայ բարկութեամբ կը դատէ եւ կը պատմէ չարագործները: Ահա թէ ինչո՛ւ պէտք է իշխանութեանց հնագանդիլ. ո՛չ միայն պատիմէն զերծ մնալու, այլ մանաւանդ խիղճով հանգիստ ըլլալու համար: Ատոր համար է նաեւ որ իշխանութեանց տուրք կը վճարէք, որպէսզի իրերեւ Աստուծոյ պաշտօնեաներ

շարունակեն իրենց այդ գերը կատարել: Հետեւ աբար անոնցմէ իւրաքանչիւրին հանդէպ ձեր պարտաւորութիւնը կատարեցէք, տուրքը տալով անոր՝ որուն տուրք պէտք է տաք, մաքսը տալով անոր՝ որուն մաքս պէտք է տաք, հնազանդելով անոր՝ որուն հնազանդութիւն կը պարտիք եւ յարգելով ան՝ որուն յարգանք կը պարտիք:

ՈԵԼԷ մէկու ոելէ բանով պարտական մի՛ մնաք.
միմիայն զիրար սիրելու պարտաւորութիւնը
ունեցէք, քանի որ իր ընկերը սիրողը կատարած
կ'ըլլայ Աստուծոյ Օրէնքը: Որովհետեւ Աստուծոյ
պատուիրանները, «Մի՛ շնար, Մի՛ սպաններ,
Մի՛ գողնար, Սուտ վկայութիւն մի՛ ըներ, Մի՛
ցանկար» եւ միւս բոլորը խտացած են սա միակ
պատուիրանին մէջ. «Միրէ ընկերդ քու անձիդ
պէս»: Ով որ իր ընկերը կը սիրէ, չարիք չ'ըներ
անոր: Ուրեմն սիրել՝ կը նշանակէ Աստուծոյ
Օրէնքը լման գործադրել:

ՅԻՄՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԼԵՏԱՐԱՆՆԵՆ ԸՍՏ ՄԱՏԹԵՈՍԻ (5.17-48)

(5.17-48)

Ար Տէրը Յիսուս Քրիստոս կ'ըսէ.-
«Մի՛ կարծէք թէ եկայ Մովսէսի Օրէնքը
կամ մարգարէներու ուսուցումները ջնջելու, այլ
ամբողջացնելու: Հաստատ գիտցէք, որ բոլոր
Օրէնքն ու մարգարէութիւնները կէտ առ կէտ
պիտի իրականանան առանց բառ մը իսկ դուրս
ձգելու, մինչեւ գայ այն օրը, երբ երկինքն ու
երկիրը պիտի անցնին: Ով որ ամենափոքր
պատուիրանն իսկ զանց ընէ եւ ուրիշներուն ալ
պատուիրէ նոյնը կատարել, երկինքի արքա-
յութեանը մէջ յետինը պիտի նկատուի: Իսկ ով որ
գործադրէ պատուիրանները եւ նոյնը ուսուցանէ,
մեծ պիտի ըլլայ երկինքի արքայութեան մէջ:
Կ'ըսեմ ձեզի, երկինքի արքայութենէն ներս
կրնաք մտնել ա՛յն ատեն միայն, երբ Աստուծոյ
պատուիրաններուն ձեր հաւատարմութիւնը
փարիսեցիներուն եւ օրէնքի ուսուցիչներուն
ունեցած հաւատարմութենէն աւելի ըլլայ:

«Լսեր էք որ անցեալին ըսուած է. ‘Մի’ սպաններ, որովհետեւ ան որ կը սպաննեէ, պիտի դատապարտուի”: Իսկ ես կ’ըսեմ ձեզի. Ով որ առանց պատճառի իր եղբօր դէմ բարկանայ, պիտի դատապարտուի: Ով որ իր եղբայրը յիմար կոչէ, դարձեալ ատեան պիտի բերուի. Կամ, ան որ իր եղբայրը անմիտ կոչէ, Գեհենի կրակին պիտի դատապարտուի: Եթէ գոհի սեղանին վրայ ընծադ Աստուծոյ մատուցանելու ատեն յիշես որ

եղբայր վշտացած է քեզմէ՛, ձգէ՛ ընծաղ սեղանին
առջեւ, գնա' նախ հաշտուէ եղբօրդ հետ եւ ապա
եկուր եւ ընծաղ Աստուծոյ մատուցանէ:

«Երբ մէկը խնդիր ունի քեզի հետ եւ դատի կը կանչէ քեզ, սկիզբէն համաձայնութեան եկուր անոր հետ, երբ տակաւին ժամանակ ունիս. այլապէս քեզ դատաւորին կը յանձնէ, դատաւորն ալ՝ ոստիկանին, եւ բանտ կը նետուիս: Վստահ եղիր, թէ բանտէն պիտի չելլես մինչեւ որ տուգանքիդ վերջին դահեկանը չվճարես:

«Լսեր էք որ ըստւած է. “Մի՛ շնար”: Իսկ ես
կ'ըսեմ ձեզի, թէ ով որ ցանկութեամբ նայի
ուեւէ կնոյ՝ արդէն իսկ իր
սիրտին մէջ շնութիւն ըրած
կ'ըլլայ անոր հետ։ Եթէ աջ
աչքդ քեզ կը գայթակ-
ղեցնէ, հանէ՛ եւ նետէ զայն,
որովհետեւ նախընտրելի
է որ անդամներէդ մէկը
կորսնցնես քան ամբողջ
մարմնով դժոխւք նետուիս։
Եթէ աջ ձեռքդ քեզ կը
գայթակղեցնէ, կտրէ՛ ու
նետէ զայն, որովհետեւ, նախընտրելի է որ
անդամներէդ մէկը կորսնցնես, քան ամբողջ
մարմնով դժոխւք նետուիս։

«Հսուած է նաեւ. “Ով որ իր կինը կ’արձակէ, անոր արձակման թուղթ թող տայ”»: Իսկ ես կ’ըսեմ ձեզի. ան որ առանց պոռնկութեան պատճառի իր կինը կ’արձակէ, ինք պատճառ կը դառնայ անոր շնութիւն ընելուն։ Նոյնպէս, շնութիւն ըրած կ’ըլլայ ան՝ որ կ’ամուսնանայ արձակուած կնոջ հետ։

«Հսկը էք նաեւ որ անցեալին ըսուած է.
“Երդմնազանց մի՛ ըլլար, այլ կատարէ ինչ
որ երդուած էիր Աստուծոյ”։ Իսկ ես կ'ըսեմ
ձեզի. բնաւ երդում մի՛ ընէք, ո՛չ երկինքի
վրայ, որովհետեւ Աստուծոյ գահն է, ո՛չ
երկրի վրայ, որովհետեւ անոր
ոտքի պատուանդանն է, ո՛չ ... ձեր
երուսաղէմի վրայ, որովհետեւ այսոն այոն
Մեծ Թագաւորին՝ Աստուծոյ թող ըլլայ
քաղաքն է, եւ ո՛չ ալ քու
գլուխիդ վրայ, որովհետեւ չես
կրնար մազ մը իսկ ճերմկնցնել կամ սեւցնել։
Պարզապէս ձեր այոն այոն թող ըլլայ եւ ոչը՝ ոչ։
Անկէ աւելին չարէն կու գալ։

«**Լսեր էք որ ըստած է.** “Աչքի դեմ աչք պիտի հասուցանես եւ ակռայի դեմ՝ ակռայ”:

Իսկ ես կ'ըսեմ ձեզի. Մի՛ հակառակիր քեզի
չարիք ընողին: Եթէ մէկը աջ երեսիդ ապտակ
զարնէ՝ միւս երեսդ ալ դարձուր անոր: Եւ եթէ
մէկը ուզէ քեզ դատի կանչել շապիկդ առնելու
համար, բաճկոնդ ալ տուր անոր: Եթէ մէկը քեզ
բռնադատէ մէկ մղոն միասին երթալ՝ իր բեռը
շալկելու համար, անոր հետ երկու մղոն ալ գնա:
Եթէ մէկը քեզմէ բան մը խնդրէ՝ տո՛ւր, եւ եթէ
մէկը քեզմէ բան մը փոխ առնել ուզէ, երես մի՛
դարձներ:

«Լսեր էք արդարեւ որ ըսուած է. «Սիրե՛ ընկերդ
եւ ատէ թշնամիդ»: Իսկ ես կ'ըսեմ ձեզի. Սիրեցէ՛ք
ձեր թշնամիները, օրհնեցէք ձեզ անիծողները,
բարիք ըրէք ձեզ ատողներուն եւ աղօթեցէք անոնց
համար, որոնք ձեզ կը չարչարեն ու կը հալածեն:

Այդպիսով դուք ձեր երկնաւոր
Հօր զաւակները կը դառնաք, կատարեալ
որովհետեւ ան իր արեւը կը եղէֆ,
ծագեցնէ թէ՛ չարերուն եւ թէ՛ ինչպէս
բարիներուն վրայ եւ անձրեւ
կը տեղացնէ թէ՛ արդարներուն
եւ թէ՛ մեղաւորներուն վրայ: Եթէ միայն սիրողները սիրէք,
ի՞նչ տարբերութիւն կ'ունենաք
մեղաւորներէն: Մեղաւորներն
ալ նոյնը չե՞ն ըներ: Նմանապէս, եթէ միայն ձեր
ծանօթները բարեկամ նկատէք, հեթանոսներէն եւ
մեղաւորներէն աւելի ի՞նչ ըրած կ'ըլլաք: Անոնք
ալ նոյնը չե՞ն ըներ: Արդ, դուք կատարեալ եղէք,
ինչպէս որ ձեր երկնաւոր Հայրը կատարեալ է»:

... դուք
կատարեալ
եղէֆ,
ինչպէս
որ ձեր
երկնաւոր
Հայրը
կատարեալ
է:

ՄԵԾ ՊԱՀՔԻ ԼՍԱՐԱՆ

ՅԱՏ ԽԱՂԱԳՈՎԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՎԱՏԵԱՆ ԺՎԱՆՔՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ.
ՍԿՐԻՖ ԺՎԱՆՔՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԵՐԵԿՈՎԵԱՆ ԺՎԱՐ 7.00

2

Չորեքշաբթի, 21 Փետրուար

Նիւթ՝ Ազատութիւնը ըստ Ս. Գիրքին
Կը մատուցէ Տիկ. Նանիա Փիլիպոսեան

3

Չորեքշաբթի, 28 Փետրուար

Նիւթ՝ Մակարայեցիներուն օրինակը Վարդանանց կեցուածքին մէջ
Կը մատուցէ Թորոս Սրբ. Պապիկեան

4

ՄԻԶԻՆՔ

Չորեքշաբթի, 7 Մարտ

5

Չորեքշաբթի, 14 Մարտ

Նիւթ՝ Հաւատքը տարագրութեան մէջ
(Հայեացք Ս. Գրքին մէջ արձանագրուած փորձառութեան վրայ)
Կը մատուցէ Գերյ. Գէորգ Ծ. Վրդ. Զապարեան

6

Չորեքշաբթի, 21 Մարտ

Նիւթ՝ Շնորհիքներն ու պարգեւները վասն ազգակերտումի
Կը մատուցէ Կարօ Սրբ. Նոխուտեան